ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.06.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 56/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 16.05.2016թ. և «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի 17.05.2016թ. ներկայացրած բողոքները և կից փաստաթղթերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը, «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և բողոքների վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.06.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն 16.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար «Քիմիական նյութերի» ձեռք բերման նպատակով «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 2016թ. ապրիլի 15-ի թիվ

1 որոշմամբ հայտարարվել է հրավեր, որի հայտերի բացման նիստը նշանակված է եղել 2016թ. ապրիլի 27-ին ժամը 10:00-ին:

«Խաչպար» ՍՊԸ-ն, որն ունի ԳԱԿ ՊՈԱԿ-ի հետ կնքված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագիր՝ որպես քիմիական նյութերի մատակարարող կազմակերպություն, սահմանված կարգով չի ստացել պատվիրատուի կողմից նշված ծածկագրով ընթացակարգ հայտարարելու հրավերը:

Այլ ընկերությունների կողմից տեղեկանալով վերը նշված ծածկագրով ընթացակարգի հայտարարման և մրցույթի անցկացման մասին, «Խաչպար» ՍՊԸ-ն փորձել է վերը նշված ծածկագրով հայտարարությունը և հրավերը գտնել «www.gnumner.am» ինտերնետային կայքում, սակայն նշված ծածկագրով հրավեր չի հայտնաբերել:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168- Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 37 կետի թիվ 1 ենթակետի համաձայն՝ ***«Գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերը.... ՀՀ ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է «www.gnumner.am» ինտերնետային կայքում»,*** իսկ կարգի 37 կետի թիվ 2 ենթակետի համաձայն՝ «***հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկում է նաև օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով»***:

«Խաչպար» ՍՊԸ-ն գտնում է, որ թույլ է տրվել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման 37 կետով սահմանված պահանջների խախտում՝ «www.gnumner.am» ինտերնետային կայքում պատշաճ ձևով չի հրապարակվել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով հրավերը և միևնույն ժամանակ չի ապահովվել նույն որոշմամբ սահմանված՝ տվյալ ծածկագրի ներքո գրանցված բոլոր հնարավոր մասնակիցների միաժամանակյա ծանուցման պահանջը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Խաչպար» ՍՊԸ-ն պատվիրատուի ոչ պատշաճ գործողությունների արդյունքում զրկված է եղել տվյալ ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ

և 10-րդ հոդվածներով՝ բողոքաբերը խնդրել է դադարեցնել գնահատող հանձնաժողովի 15.04.2016թ. թիվ 1 որոշումը՝ «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգը հայտարարելու մասին:

Միաժամանակ բողոքաբերը խնդրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կիրառել ժամանակավոր միջոց և արգելել «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հետագա որոշումների, մասնավորապես պայմանագրեր կնքելու մասին որոշման կայացումը և պայմանագրերի կնքումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.05.2016թ. ժամը 15:00-ին ԳԲԽ-56/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությունը սահմանված կարգով չի ստացել մրցույթի հրավերը, ուստի ընկերության կողմից ներկայացված բողոքը ենթակա է բավարարման: Միևնույն ժամանակ «Խաչպար» ՍՊԸ-ն խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել պատվիրատուի հետագա գործողությունները:

2. «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն 17.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 6 և 7 չափաբաժիններում ներկայացված գնման առարկաների տեխնիկական բնութագրերը պատվիրատուի կողմից կազմվել են ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման 24-րդ կետի պահանջների խախտումներով, գնման առարկաների բնութագրերը սահմանելիս՝ հաշվի չեն առնվել, որ դրանք պետք է բավարարեն 1-ից ավելի մասնակիցների:

Տեխնիկական բնութագրերը պարունակում են կոնկրետ միայն մե՛կ արտադրողի կողմից արտադրվող՝ բրենդային անվանում ունեցող նյութերի կոնկրե՛տ տվյալները, ինչը բացառում է մեկից ավելի մասնակիցների մասնակցության հնարավորությունը տվյալ չափաբաժիններում, որն առաջացնում է չհիմնավորված խոչընդոտներ մասնակիցների հավասար մրցակցության համար, ինչը հակասում է «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջներին: ՀՀ օրենսդիր և գործադիր բարձրագույն մարմինների կողմից հաստատված սահմանումների խախտումներով կազմելով հայտի գնման առարկաների տեխնիկական բնութագրերը, Պատվիրատուն դրանով իսկ իր համար հիմքեր է ստեղծում՝ հայտերի գնահատման ժամանակ, բացի մեկ մասնակցից, մյուս բոլոր հնարավոր մասնակիցների ներկայացրած հայտերը մերժելու՝ տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու ձևակերպումով, ինչը որ Պատվիրատուն կատարել է «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի պարագայում:

«Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 13.05.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացրած՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի թիվ 6 և 7 չափաբաժինների համար ներկայացված ապրանքները տեխնիկական բնութագրերին ոչ համարժեք համարելու, ինչպես նաև՝ 16.05.2016թ. թիվ 5 արձանագրությամբ կայացրած՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի ներկայացրած թիվ 6 և 7 չափաբաժինները մերժելու մասին և ընթացակարգի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնելու վերաբերյալ որոշումները:

«Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն, ի լրումն 17.05.2016թ. ներկայացված բողոքի, 31.05.2016թ. թիվ 09/5818-16 գրությամբ ԳԲԽ-56/16 բողոքը քննող հանձնաժողովին հայտնել է, որ իրենց կողմից ներկայացված գնային առաջարկը /Հավելված 4/ ի սկզբանե ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ Հավելված 4-ում նշվել է համարժեք նյութի անվանումը և նրա տեխնիկական բնութագրերը, որը պետք է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով և 168-Ն որոշման 44-րդ կետի 4-րդ ենթակետով անմիջապես մերժվեր, այնինչ Պատվիրատուի կողմից 27.04.2016թ. և 03.05.2016թ. կազմվել են համապատասխանաբար արձանագրություններ N 2 և N 3, որոնց համաձայն «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն ճանաչվել է 6-րդ և 7-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Նրանից պահանջվել է 2-րդ փուլի որակավորման փաստաթղթեր, որոնք 16.05.2016թ. N 5 արձանագրությամբ մերժվել են 168-Ն որոշման 52-րդ կետի 2-րդ ենթակետով և անհիմն ուղարկել ՀՀ ՖՆ՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Եթե, օրինակ, «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք ախտահանիչ նյութ գնային առաջարկում նշվեր «Ռակշա» լվացող նյութ, այդ դեպքում ևս ճանաչվելու էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից և անցներ որակավորման հաջորդ փուլ:

«Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն պահանջում է Պատվիրատուից տալ համարժեք նյութ՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան, հակառակ դեպքում հրավերով սահմանված «համարժեք» լինելը չի ունենա գնահատման որևէ չափանիշ:

Ինչպես նաև տեխնիկական բնութագրերը թերի են՝ չեն պարունակում նյութերի նորմատիվով սահմանված դիապազոններ, չկան արգելող, չթույլատրող, սահմանափակող որևէ սպեցիֆիկ ազդման գոտիներ կամ պարունակող բաղադրիչ նյութեր, ուստի և եթե տեխնիկական բնութագրերում չկան հստակ նշված բացառությունները և/կամ սահմանափակումները, այն չի կարող խոչընդոտ հանդիսանալ մասնակցի համար /հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերին/:

Պատվիրատուի կողմից 29.05.2016թ. պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ 6-րդ և 7-րդ չափաբաժիններով «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի մերժման հիմք է ներկայացված 168-Ն որոշման 125-րդ կետը, որը չի համապատասխանում իրականությանը:

«Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել Պատվիրատուի կողմից 27.04.2016թ. N 2 արձանագրությամբ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի հայտը (գնային առաջարկի մասով) հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատելու մասին որոշումը և որպես հետևանք դադարեցնել նաև 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ին փաստաթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.05.2016թ. ժամը 15:00-ին ԳԲԽ-56/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտնել են, որ հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերը պարունակում են կոնկրետ միայն մեկ արտադրողի կողմից արտադրվող բրենդային անվանում ունեցող նյութերի կոնկրետ տվյալներ, ինչը բացառում է մեկից ավելի ընկերությունների մասնակցության հնարավորությունը տվյալ

չափաբաժիններում և ցանկացած դեպքում ընկերությունը հնարավորություն չուներ ներկայացնելու հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագիր:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.05.2016թ. թիվ 09/777 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Պատվիրատուն կազմակերպել է «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ՝ քիմիական նյութերի գնման նպատակով:

2016 թվականի ապրիլի 15-ին ժամը 14:00-ին կայացված նիստում գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվել է վերոնշյալ ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեքստը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 37-րդ կետի դրույթներով՝

ա) «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում, որի արդիականության ժամկետ է սահմանվել 20/04/2016թ.-ից մինչև 27/04/2016թ.-ը ժամը 10:00-ն ներառյալ:

բ) Հրավերի էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցումը ուղարկվել է Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին՝ apranq-15-15@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի միջոցով:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2016 թվականի ապրիլի 27-ի ժամը 10:00-ին: Վերոհիշյալ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 4 (չորս) մասնակից:

Կարգի 47.1 կետի դրույթներին համապատասխան՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում և միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվել է վերոհիշյալ գնման ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 44-րդ կետի դրույթներին համապատասխան՝ գնահատվել են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և 2016 թվականի ապրիլի 27-ի ժամը 10:00-ին կայացած նիստում ամփոփվել են գնահատման արդյունքները և հայտարարվել են 1-ին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

Կարգի 47-րդ կետի դրույթներին համապատասխան՝ 2016 թվականի ապրիլի 28-ին՝

- հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
- Ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկվելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը, բացառությամբ՝ «Լեյկո Ալեքս» ՍՊԸ-ի:

2016 թվականի մայիսի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է հարցման մասին համապատասխան եզրակացությունը:

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներին համապատասխան՝ 2016 թվականի մայիսի 3-ին ժամը 16:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է «Լեյկո Ալեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթերի ներկայացման պահանջ է առաջադրվել համապատասխանաբար N 2,

3 չափաբաժինների մասով՝ «Մագտոնի» ՍՊԸ-ին, N 6 չափաբաժնի մասով՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ին: Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը:

2016 թվականի մայիսի 13-ին ժամը 13:30-ին կայացված նիստում գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվել է, որ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից համարժեքության սկզբունքով ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: Կարգի 51-րդ կետի դրույթներին համապատասխան՝ 2016 թվականի մայիսի 13-ին ծանուցվել է «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ին այն մասին, որ մինչև 2016 թվականի մայիսի 16-ը ժամը 15:00-ն ներառյալ շտկի առկա անհամապատասխանությունները: «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել առկա անհամապատասխանությունները:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներին համապատասխան՝ 2016 թվականի մայիսի 16-ին ժամը 15:00-ին կայացված նիստում գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթերի ներկայացման պահանջ է առաջադրվել «Մագտոնի» ՍՊԸ-ին:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.05.2016թ. ժամը 15:00-ին ԳԲԽ-56/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչը հայտնեց, որ ընթացակարգի հրավերը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում և հրավերի էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցումը ուղարկվել է հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին՝ aprang-15-15@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի միջոցով:

«Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից համարժեքության սկզբունքով ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին, ինչի վերաբերյալ համապատասխան մարմնի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ուստի գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և հնարավորություն է տվել մասնակցին շտկել

նշված անհամապատասխանությունը, սակայն ընկերությունը չի շտկել այն, ինչի արդյունքում էլ գնահատող հանձնաժողովը մերժվել է ընկերության հայտը:

4. ԳԲԽ-56/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 03.06.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Խաչպար» ՍՊԸ-ի 16.05.2016թ. ներկայացրած բողոքը մերժել, իսկ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի 17.05.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

5. ԳԲԽ-56/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-56/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 2016թ. ապրիլի 18-ին:

3. Հրավերի էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցումը 2016թ. ապրիլի 18-ին ուղարկվել է շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին՝ apranq-15-15@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի միջոցով:

4. Ընթացակարգի հրավերի հավելված 4-ի համաձայն՝ գնի առաջարկը ներկայացվում է հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարներ ը	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>				
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>				
...	...				
...	...				

5. «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 26.04.2016թ. ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով՝ գնի առաջարկով հայտնել է, որ ուսումնասիրելով հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

Չափա-բաժինների համարներ ը	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
5	Նիկա Քլոր հաբ N300-ին համարժեք՝ ***«Ադամանդե միգ» 1կգ /դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ 3,4գ հաբ և ակտիվ քլոր՝ 1,53գ/, ունի ՀՀ ԱՆ հաստատված հրահանգ***	567 000	95 500	-	662 500 /վեց հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր/
6	Սուրֆիանոս խտանյութ 1լ-ին համարժեք՝ ***«Աստրադեզ լայթ» 1լ N,N-բիս-(3-ամինոպրոպիլ)-դոդեցիլամին 7,1±0,1%, N,N-դիդեցիլ-N,N-դիմեթիլամոնիումի քլորիդ 3,5±0,3%, ունի ՀՀ ԱՆ հաստատված հրահանգ***	322 000	73 000	-	395 000 /երեք հարյուր իննսունհինգ հազար/
7	Սուրֆա՝ սեյֆ Պրեմիում 750մլ-ին համարժեք՝ ***«Բրիլիանտե սպրեյ» 750մլ: Փոքր մակերեսների ախտահանման միջոց՝ 1-5 րոպե, ունի ՀՀ ԱՆ հաստատված հրահանգ***	334 125	85 875	-	420 000 /չորս հարյուր քսան հազար/

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցող բոլոր ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը ***համապատասխանում են «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:***

7. Գնահատող հանձնաժողովի 27.04.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությանը կից ներկայացված Հավելված 2-ի համաձայն՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն 7-րդ չափաբաժնով (Սուրֆա՝ սեյֆ Պրեմիում 750մլ կամ համարժեք) ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

8. 03.05.2016թ. ժամը 16:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Լեյկո Ալեքս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված 2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինները և փաստաթղթերի ներկայացման պահանջ ներկայացնել համապատասխանաբար 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով՝ «Մագտոնի» ՍՊԸ-ին, 6-րդ չափաբաժնի մասով՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ին:

9. 13.05.2016թ. ժամը 13:30-ին կայացած նիստի N 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը, որոշել է «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ և 7-րդ չափաբաժինների համար որպես համարժեք ներկայացված ապրանքները համարել հրավերի տեխնիկական բնութագրերին ոչ համարժեք և առաջարկել «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

10. 16.05.2016թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել է «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ներկայացված հայտը:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 16.05.2016թ. և «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի 17.05.2016թ. ներկայացրած բողոքները և կից փաստաթղթերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը, «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի 16.05.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման, իսկ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի 17.05.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մասնակի բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքի մասով

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Կարգի 37-րդ կետի համաձայն՝

«Գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝

1) գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերը, (...) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում.

2) հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկում է նաև օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով. (...):

Գործում առկա նյութերից երևում է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում՝ **2016թ. ապրիլի 18**-ին, իսկ Հրավերի էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցումը **2016թ. ապրիլի 18-ին** ուղարկվել է շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին՝ apranq-15-15@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի միջոցով, ուստի

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել Կարգի 37-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգը հայտարարելու մասին 15.04.2016թ. թիվ 1 որոշումը դադարեցնելու պահանջի վերաբերյալ «Խաչպար» ՍՊԸ-ի 16.05.2016թ. ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

2. «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի բողոքի մասով

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են ***հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:***

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ **գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան**, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Խորհուրդն արձանագրում է, որ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնի առաջարկը կազմված չի եղել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ ապրանքի անվանումը վանդակներում նշվել է ոչ միայն գնման առարկայի չափաբաժնի անվանումը, այլ նաև

առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, ինչը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին և Կարգի 45-րդ կետի համաձայն՝ շտկման ենթակա չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, չարձանագրելով նշված անհամապատասխանությունը, 27.04.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությանը կից ներկայացված Հավելված 2-ի համաձայն՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ին 7-րդ չափաբաժնով (Սուրֆա՝ սեյֆ Պրեմիում 750մլ կամ համարժեք) ճանաչել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկել ներկայացնել հրավերով սահմանված՝ 1-ին տեղը զբաղեցնող մասնակցից պահանջվող փաստաթղթերը, իսկ հետագայում էլ՝ 16.05.2016թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության համաձայն, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը, որոշել է մերժել «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ որպես համարժեք ներկայացված ապրանքները Հրավերի տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պետք է մերժեր Ընկերության կողմից ներկայացված հայտը, սակայն չարձանագրելով առկա անհամապատասխանությունը և Ընկերության հայտը, այդ փուլում չմերժելով, շարունակել է ընցակարգը:

Խորհուրդը գտնում է, որ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի հայտը՝ գնի առաջարկը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, նշված փուլում ենթակա էր մերժման:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի 17.05.2016թ. բողոքով ներկայացված՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությամբ կայացված «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի 17.05.2016թ. բողոքով ներկայացված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 03.05.2016թ. ժամը 16:00-ին կայացած

նիստի N 3 արձանագրությամբ՝ 6-րդ չափաբաժնի մասով «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ին փաստաթղթերի ներկայացման պահանջ ներկայացնելու, 13.05.2016թ. ժամը 13:30-ին կայացած նիստի N 4 արձանագրությամբ՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ և 7-րդ չափաբաժինների համար որպես համարժեք ներկայացված ապրանքները հրավերի տեխնիկական բնութագրերին ոչ համարժեք համարելու, 16.05.2016թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 5 արձանագրությամբ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ներկայացված հայտը մերժելու մասին կայացված որոշումները դադարեցնելու պահանջներին, ապա Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությամբ՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին որոշման դադարեցման պայմաններում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի մասով, կայացված հետագա որոշումների իրավաչափության քննարկումը դառնում է առարկայազուրկ:

Ինչ վերաբերում է «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի բողոքի այն պատճառաբանություններին, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1,2,3,4,5,6 և 7 չափաբաժիններում ներկայացված գնման առարկաների տեխնիկական բնութագրերը Պատվիրատուի կողմից կազմվել են Կարգի 24-րդ կետի և Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջների խախտումներով, քանի որ գնման առարկաների տեխնիկական բնութագրերը պարունակել են կոնկրետ միայն մե՛կ արտադրողի կողմից արտադրվող՝ բրենդային անվանում ունեցող նյութերի կոնկրե՛տ տվյալները, ինչը բացառում է մեկից ավելի մասնակիցների մասնակցության հնարավորությունը տվյալ չափաբաժիններում, ապա Խորհուրդը դրանք քննարկման առարկա չի դարձնում, քանի որ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ իրավական հիմքով որևէ պահանջ (Օրենքի պահանջների խախտմամբ կազմակերպված Ընթացակարգն ապօրինի հայտարարելու կամ Ընթացակարգը հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու) չի ներկայացվել, ավելին, «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Ընթացակարգին և միայն հետագայում է բողոքարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով, 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊԸ-ի՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «ՇՀԱՊՁԲ-15/15-12-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգը հայտարարելու մասին 15.04.2016թ. թիվ 1 որոշումը դադարեցնելու պահանջի վերաբերյալ 16.05.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

2. «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի 17.05.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությամբ կայացված որոշումը՝ «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանելու մասին:

3. «Ադամանդ-Մեդ» ՍՊԸ-ի 17.05.2016թ. ներկայացրած բողոքը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամ՝ **Գրիգոր Արամյան**

Անդամ՝ **Գոռ Մանուկյան**